

Airbnb-ն այժմ հասանելի է երկու անգամ ավելի շատ լեզուներով

Airbnb-ն յուրօրինակ հայտարարությունների ամենախոշոր շուկան է աշխարհում: Ավելի քան 7 միլիոն տներ և 40 000 միջոցառումներ են առաջարկում տեղացի տանտերերն ու փորձառությունների կազմակերպիչները: Յուրաքանչյուր վայրկյան մոտ 6 հյուր է ժամանում Airbnb տուն: Եվ այս տարածքները սփռված են ամբողջ աշխարհով մեկ: 2011 թվականին կային 12 քաղաքներ, որոնք ունեին ավելի քան 1 000 Airbnb տարածք, իսկ այսօր մոտ 1 000 քաղաք ունի Airbnb- ի ավելի քան 1 000 տարածք: Նույն կերպ 2011 թվականին միայն մեկ քաղաք 100 000-ից ավելի հյուր էր ընդունում Airbnb տներում, իսկ անցած տարվա ընթացքում ավելի քան 300 քաղաքներում ընդունել են 100 000-ից ավելի հյուրի:

Մինչ Airbnb-ն արդեն օգտագործվում է աշխարհի ավելի քան 191 երկրներում և տարածաշրջաններում, մենք անընդհատ աշխատում ենք, որ մեր հարթակը հասանելի դառնա ավելի շատ մարդկանց: Ալբաներենից մինչև ֆրանսերեն՝ մենք ուզում ենք, որ բոլորն Airbnb-ում իրենց զգան ինչպես տանը՝ անկախ իրենց մայրենի լեզվից:

Այսօր մենք կրկնապատկում ենք այն լեզուների թիվը, որոնցով տանտերերն ու հյուրերը կարող են օգտվել Airbnb-ից: Աջակցելով 62 լեզու՝ Airbnb հարթակը հասանելի է դառնում ավելի քան 4 միլիարդ մարդկանց՝ իրենց մայրենի լեզվով: Այս նոր լեզուներով ձգտում ենք տնտեսական հնարավորություններ ստեղծել ավելի շատ տանտերերի համար, իսկ ճանապարհորդներին տալ յուրօրինակ փորձառության հնարավորություն:

Ահա Airbnb-ում այժմ հասանելի 31 նոր լեզուները՝

1. Ադրբեջաներեն (Ադրբեջան)
2. Ալբաներեն (Ալբանիա)
3. Անգլերեն (Ավստրալիա)
4. Անգլերեն (Կանադա)
5. Անգլերեն (Միացյալ Թագավորություն)
6. Բոսնիերեն (Բոսնիա)
7. Բուլղարերեն (Բուլղարիա)

¹ Ethnologue.com, 2019 թ. հոկտեմբեր: Airbnb-ն 62 լեզվով այժմ հասանելի է ավելի քան 4 միլիարդ մարդկանց՝ իրենց մայրենիով: 62 լեզվով խոսելու ենք այդ լեզուները կրող 4,3 միլիարդ մարդկանց հետ: (3,3 միլիարդ՝ առկա 31 լեզուներով, ու ևս 1 միլիարդ այն 31 նոր լեզուներով, որոնք նոր ենք ավելացրել:)

8. Զուլու (Հարավային Աֆրիկա)
9. Էստոներեն (Էստոնիա)
10. Իռլանդերեն (Իռլանդիա)
11. Իսպաներեն (Արգենտինա)
12. Իսպաներեն (Լատինական Ամերիկա)
13. Լատվիերեն (Լատվիա)
14. Լիտվերեն (Լիտվա)
15. Կոսա (Հարավային Աֆրիկա)
16. Հայերեն (Հայաստան)
17. Հինդի (Հնդկաստան)
18. Մալթերեն (Մալթա)
19. Մակեդոներեն (Հյուսիսային Մակեդոնիա)
20. Չեռնոգորերեն (Չեռնոգորիա)
21. Ավանդական չինարեն (Հոնկոնգի ՀՎՇ)
22. Ռումիներեն (Ռումինիա)
23. Սերբերեն (Սերբիա)
24. Սլովակերեն (Սլովակիա)
25. Սլովեներեն (Սլովենիա)
26. Սուահիլի (Աֆրիկա)
27. Վիետնամերեն (Վիետնամ)
28. Վրացերեն (Վրաստան)
29. Տագալոգ (Ֆիլիպիններ)
30. Ուկրաիներեն (Ուկրաինա)
31. Ֆրանսերեն (Կանադա)

Airbnb կայքից կամ հավելվածից օգտվող մեր տանտերերն ու հյուրերը հեշտությամբ կարող են փոխել լեզուն: Համակարգչում սեղմեք [այստեղ](#)՝ լեզուն ընտրելու համար: Մեր բջջային հավելվածներն օգտագործում են սարքի կարգավորումներում ընտրված լեզուն: Փոխելու համար օգտատերերը կարող են պարզապես բացել սարքի կարգավորումները և ընտրել այժմ աջակցվող լեզուներից մեկը: